ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՄ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

(բողոքներ թիվ 1/2840-2024, 1/2765-2024, 1/2886-2024, 1/2727-2024)

ք. Երևան 04.10.2024թ.

Մարդու իրավունքների ենթադրյալ խախտման մասին բողոքի քննարկման ընթացքը և ձեռնարկված միջոցները.

1. 2024 թվականի փետրվարի 29-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի թեժ գիծ հեռախոսահամարին են զանգահարել Համլետ Գևորգյանն ու Աղասի Ադամյանը և տեղեկացրել, որ Երևանի քաղաքապետարանը Նոր Նորք վարչական շրջանի Լվովյան փողոցի մի քանի հասցեների ինքնակամ կառույցների ապամոնտաժման աշխատանքներ է սկսել: Բողոք ներկայացրած անձանց պնդմամբ՝ Երևանի քաղաքապետարանի գործողությունների արդյունքում խախտվում են իրենց իրավունքները:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Պաշտպանի ներկայացուցիչները նույն օրն արագ արձագանքման այց են իրականացրել Նոր Նորք վարչական շրջանի Լվովյան փողոց, որտեղ տվյալ պահին տեխնիկայի գործադրմամբ ընթանում էին քանդման աշխատանքներ:

Պաշտպանի ներկայացուցիչները տեղում հանդիպել են Երևանի քաղաքապետարանի ներկայացուցչի հետ: Վերջինս տեղեկացրել է, որ նշված բնակելի շինությունները գտնվում են

համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վրա և քանդման աշխատանքները կատարվում են Երևանի քաղաքապետի 2024 թվականի փետրվարի 29-ի թիվ 757-Ա, 758-Ա, 759-Ա, 760-Ա, 761-Ա, 762-Ա, 763-Ա և 764-Ա որոշումների հիման վրա:

Հավելել է, որ այն ընտանիքները, որոնք փետրվարի 14-ին և 27-ին տեղի ունեցած շրջայցի պահին եղել են իրենց կացարաններում, Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչների կողմից ***բանավոր*** ծանուցվել են ինքնակամ կառույցների ապամոնտաժման մասին:

Այցի ընթացքում Պաշտպանի ներկայացուցիչները զրուցել են նաև Լվովյան փողոցի բնակիչների հետ: Վերջիններս իրենց դժգոհությունն են հայտնել, որ տարիներ շարունակ դիմել են Երևանի քաղաքապետարան իրենց ինքնակամ շինություններն օրինականացնելու նպատակով, սակայն վերջնական պատասխան, այդ թվում՝ մերժման վերաբերյալ, չեն ստացել: Հավելել են, որ ապամոնտաժման աշխատանքներ իրականացնելու վերաբերյալ ***բանավոր*** տեղեկացվել են նույն թվականի փետրվարի 27-ին:

2. 2024 թվականի մարտի 5-ին, 6-ին և 11-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ ինքնակամ կառույցների ապամոնտաժման խնդրով գրավոր բողոքներ են հասցեագրել Լվովյան փողոցի բնակիչներ՝ Անդրանիկ Աթաբեկյանը, Արամ Սմբատյանը, Աղասի Ադամյանը և Համլետ Գևորգյանը:

Պաշտպանին հասցեագրած բողոքներով վերջիններս տեղեկացրել են, որ երկար տարիներ բնակվել են Լվովյան փողոցի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վրա կառուցված ինքնակամ շինություններում: Հավելել են, որ հաշվառված են իրենց փաստացի բնակության վայրի հասցեներով, որոնց հիման վրա դարձել են «Վեոլիա ջուր» և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲ ընկերությունների բաժանորդներ և պատշաճ կատարել են կոմունալ, հողի հարկի և գույքահարկի վճարումները:

Բողոք ներկայացրած անձանցից ոմանք հայտնել են, որ ինքնակամ կառույցներն օրենքով սահմանված կարգով հաշվառել են Կադաստրի կոմիտեում: Այնուհետև, մի քանի անգամ դիմումներ են հասցեագրել Երևանի քաղաքապետին ինքնակամ կառույցների օրինականացման խնդրանքով:

Վերջիններիս տեղեկացմամբ՝ Երևանի քաղաքապետարան հասցեագրված դիմումների քննարկման արդյունքում ինքնակամ կառույցների օրինականացման կամ օրինականացումը մերժելու վերաբերյալ որոշումներ չեն կայացվել:

Մասնավորապես, բողոք ներկայացրած անձինք նշել են, որ դիմումների քննարկման յուրաքանչյուր դեպքում օրենքով սահմանված 30-օրյա ժամկետում Երևանի քաղաքապետարանից ստացված պատասխան գրություններով իրենց պարզաբանվել է, որ ինքնակամ կառույցների օրինականացման համար դիմումին կից անհրաժեշտ է ներկայացնել *ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշմամբ* սահմանված փաստաթղթերը:

Բողոք ներկայացրած անձինք հավելել են, որ ինքնակամ կառույցների օրինականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը կազմելուց հետո՝ կրկին դիմել են Երևանի քաղաքապետին ինքնակամ կառույցների օրինականացման խնդրանքով: Վերջին դիմումներին ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանից հայտնել են, որ այդ հողամասերը համաձայն *ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 2330-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի գլխավոր հատակագծի՝ հանդիսանում են հասարակական նշանակության կանաչ տարածքների գոտի: Հավելել են, որ ներկայում իրականացվում են Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի մշակման աշխատանքներ, որոնց ավարտից հետո հարցին հնարավոր կլինի անդրադառնալ վերոնշյալ աշխատանքների քննարկման ժամանակ այդ տարածքների նպատակային և գործառնական նշանակության հստակեցումից հետո*:

Բացի այդ, Ա. Աթաբեկյանի կողմից հաշվառված ինքնակամ շինությունն ապամոնտաժելուց հետո՝ Երևանի քաղաքապետարանը 2024 թվականի մարտի 4-ի թիվ 18/36468-24 պատասխան գրությամբ նրան հայտնել է, որ *ինքնակամ կառույցով ծանրաբեռնված այդ հողամասը հանդիսանում է հասարակական նշանակության կանաչ տարածքների գոտի: Հավելել են, որ ինքնակամ կառույցի օրինականացման մասին դիմումին կանդրադառնան Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի մշակման աշխատանքների ավարտից հետո:*

Ա. Աթաբեկյանի պնդմամբ՝ Լվովյան փողոցի 5/4 հասցեին հարակից հասցեում իր կողմից կառուցված ինքնակամ շինության քանդման վերաբերյալ Երևանի քաղաքապետարանի կողմից որոշում չի կայացվել, ինչի արդյունքում, վերջինս զրկվել է նաև դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավորությունից: Հավելել է, որ նշվածի մասին է վկայում նաև ինքնակամ կառույցի ապամոնտաժման աշխատանքների

ավարտից հետո Երևանի քաղաքապետարանի կողմից օրինականացման վերաբերյալ իր դիմումին տրված պատասխանը:

3. Բողոք ներկայացրած անձինք խնդրել են Պաշտպանի աջակցությունն ինքնակամ կառույցների ապամոնտաժման գործընթացի իրավաչափությունը պարզելու հարցում:

4. Վերը նշված բողոքների ուսումնասիրության հիման վրա Պաշտպանի կողմից որոշումներ են կայացվել բողոքները քննարկման ընդունելու մասին:

<u>Մարդու իրավունքների խախտում արձանագրելու համար նշանակություն ունեցող հանգամանքները.</u>

5. ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը 2024 թվականի ապրիլ ամսին գրություններ է հասցեագրել Երևանի քաղաքապետին՝ խնդրելով պարզաբանումներ տրամադրել հետևյալ հարցադրումների վերաբերյալ.

1) արդյո՞ք բողոք ներկայացրած անձինք ողջամիտ ժամկետում պատշաճ ծանուցվել են ինքնակամ կառույցների քանդման որոշումների մասին: Եթե այո, ապա խնդրում եմ տրամադրել տեղեկություններ՝ ծանուցման եղանակների մասին: Եթե ոչ, ապա ի՞նչ հիմնավորումներով,

2) ի՞նչ հիմնավորմամբ է Երևանի քաղաքապետարանը քաղաքացու կողմից ինքնակամ կառույցի օրինականացման համար ներկայացված դիմումին ապամոնտաժման աշխատանքների կատարումից հետո՝ մի քանի օր անց՝ գրավոր պատասխանել, որ ինքնակամ կառույցի օրինականացման մասին դիմումին կանդրադառնան Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի մշակման աշխատանքների ավարտից հետո:

6. Վերոնշյալ գրություններին ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանից ստացված թիվ 01/70688-24, 01/70674-24, 01/70700-24, 01/67889-24 գրություններով տրամադրվել են նույնաբովանդակ պատասխաններ, առանց անհատականացնելու յուրաքանչյուր հասցեին վերաբերելի քանդման որոշումները, ինչպես նաև չանդրադառնալով ընդունված վարչական ակտերի ծանուցումների վերաբերյալ բարձրացված հարցերին: Մասնավորապես, հայտնել են, որ Նոր Նորք վարչական շրջանի Լվովյան փողոցի հ. 5/4, հ. 5/6, հ. 5/7 և հ. 5ա հասցեների հարակից տարածքում քանդման աշխատանքներն իրականացվել են Երևանի քաղաքապետի 29.02.2024 թվականի 757-Ա, 758-Ա, 759-Ա, 760-Ա, 761-Ա, 762-Ա, 763-Ա և 764-Ա որոշումների

հիման վրա: Քանդման որոշման համար հիմք են հանդիսացել որոշումների մեջ առկա փաստական հանգամանքներն ու իրավական հիմքերը:

7. Նշենք, որ Երևանի քաղաքապետարանից ստացված միայն թիվ 01/67889-24 պատասխան գրությամբ են անդրադարձել վարչական ակտի ծանուցման վերաբերյալ արված հարցադրմանը՝ նշելով, որ քաղաքացի Հ. Գևորգյանն ապամոնտաժման վերաբերյալ ծանուցվել է բանավոր կերպով՝ հաշվի առնելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետը:

8. Երևանի քաղաքապետարանի մեկ այլ՝ թիվ 01/70674-24 պատասխան գրությամբ տեղեկացրել են, որ Լվովյան փողոցի 5/4 հասցեին հարակից հասցեի քանդման աշխատանքներն իրականացվել են Երևանի քաղաքապետի 2024 թվականի փետրվարի 29-ի թիվ 757-Ա որոշման հիման վրա: Ընդ որում, պատասխան գրությամբ անդրադարձ չի կատարվել նույն հասցեի **ինքնակամ կառույցի ապամոնտաժումից հետո Ա. Աթաբեկյանին ուղղված պատասխան գրության հիմնավորման վերաբերյալ Պաշտպանի կողմից բարձրացված հարցին:**

9. Պաշտպանի աշխատակազմում ուսումնասիրվել են Երևանի քաղաքապետի Լվովյան փողոցի ինքնակամ կառույցների քանդման վերաբերյալ որոշումները:

10. Այսպես, որոշումների 1-ին կետում նշված է, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի «բ» կետի համաձայն՝ Նոր Նորք վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմում հարուցվել է վարչական վարույթ: Վարչական վարույթի ընթացքում լսումներ չեն անցկացվել՝ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետը: Ըստ այդմ, ***լսումներ չեն անցկացվում, եթե անհրաժեշտություն է առաջանում անհապաղ ընդունելու վարչական ակտ, քանի որ հապաղումը կարող է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացման:***

11. Որոշումների երկրորդ կետով սահմանվել է, որ վարչական գործի փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում ձեռք բերված ապացույցներով վարչական ակտի ընդունման համար հիմք են հանդիսացել հետևյալ փաստերը.

ա. Երևանի Նոր Նորք վարչական շրջանի Լվովյան փողոցի (...) հասցեում հասարակական նշանակության կանաչ տարածքների գոտում, համայնքային

սեփականություն հանդիսացող հողամասի վրա կառուցվել է բետոնե հիմքով և քարե շարվածքով շինություն, իսկ դրանով ծանրաբեռնված հողամասը փաստացի օգտագործվում է ապօրինի, քանի որ այդ հողամասի և գոյություն ունեցող շինության նկատմամբ չկա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված որևէ իրավունք.

բ. վերոնշյալ ինքնակամ շինությամբ փաստացի ծանրաբեռնված է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը, ուստի անհրաժեշտություն է առաջացել ազատել հիշյալ հողամասը՝ դրանով ծանրաբեռնված ինքնակամ շինությունից.

գ. առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի իրականացված վերոնշված հասցեի շինությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան շինարարական հրապարակով կահավորված չէ, կառուցվող շինությունը որևէ կերպ սահմանազատված չէ, մայթը տարանջատված չէ ինքնակամ շինությունից, ինչից բխում է, որ շինարարության իրականացումը կարող է վտանգ ներկայացնել անձանց կյանքին և առողջությանը, այսինքն՝ վարչական ակտն ընդունելու հապաղումը կարող է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացմանը:

12. Վարչական մարմինը՝ որպես վարչական ակտն ընդունելու հիմնավորում՝ ի թիվս այլնի վկայակոչել է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը, այն է՝ եթե վարչական վարույթ հարուցելուց հետո վարչական մարմնի տրամադրության տակ առկա են համապատասխան վարչական ակտ ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա վարչական մարմինը պարտավոր է վարչական ակտ ընդունել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում՝ չսպասելով ընդհանուր կամ հատուկ ժամկետի լրանալուն:

13. Երևանի քաղաքապետարանը քանդման որոշումների մեջ վկայակոչել է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 60-րդ հոդվածի առաջին մասը, ըստ որի՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ **<u>այդ ակտով այլ բան նախատեսված չէ</u>**: Միաժամանակ, վարչական ակտի եզրափակիչ մասի 6-րդ կետով սահմանել է, որ այդ **<u>որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:</u>**

14. Ինքնակամ կառույցների քանդման վերաբերյալ որոշումների եզրափակիչ մասի 7-րդ կետով նախատեսվել է, որ այդ որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

15. Վերոնշյալ հանգամանքների և Լվովյան փողոցի ինքնակամ կառույցների քանդման մասին Երևանի քաղաքապետի որոշումներում տեղ գտած փաստական հանգամանքների ու իրավական հիմքերի հաշվառմամբ՝ Պաշտպանը 2024 թվականի հուլիսի 30-ին կրկնակի գրություն է հասցեագրել Երևանի քաղաքապետին՝ խնդրելով պարզաբանումներ տրամադրել բողոքի շրջանակում կատարված ուսումնասիրությունների արդյունքների մասին և գրությամբ նկարագրված հանգամանքների վերաբերյալ դիրքորոշում ներկայացնել:

16. Երևանի քաղաքապետարանից 2024 թվականի օգոստոսի 23-ին ստացված թիվ 01/131661-24 պատասխան գրությամբ՝ Պաշտպանի գրությանը ոչ միայն առարկայական պատասխան չի տրվել և ոչ մի հարցադրման անդրադարձ չի կատարվել, այլ ըստ էության տրամադրվել է Պաշտպանին հասցեագրված նախորդ գրությունների նույնաբովանդակ պատասխանը: Այսպես, Երևանի քաղաքապետարանի պատասխան գրությամբ նշվել է, որ Նոր Նորք վարչական շրջանի Լվովյան փողոց, հ.հ. 5/4, 5/6, 5/7 և 5ա հասցեների հարակից տարածքում ապամոնտաժման աշխատանքներն իրականացվել են Երևանի քաղաքապետի 2024 թվականի փետրվարի 29-ի հ.հ. 757-Ա, 758-Ա, 759-Ա, 760-Ա, 761-Ա, 762-Ա, 763-Ա և 764-Ա որոշումների համաձայն՝ հաշվի առնելով դրանցում առկա փաստական հանգամանքներն ու իրավական հիմքերը: Նշվել է նաև, որ վերոնշյալ տարածքներն ըստ Երևան քաղաքի գլխավոր հատակագծի՝ գտնվել են հասարակական նշանակության կանաչ տարածքների գոտում:

Մինչդեռ, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, կազմակերպությունները, դրանց պաշտոնատար անձինք կամ ներկայացուցիչները պարտավոր են սույն օրենքով սահմանված կարգով Պաշտպանին անվճար և հնարավոր կարճ ժամկետում տրամադրել ***անհրաժեշտ նյութեր, փաստաթղթեր, տեղեկություններ և պարզաբանումներ, ինչպես նաև այլ կերպ աջակցել նրա աշխատանքներին:***

17. Երևանի քաղաքապետարանի կողմից ապամոնտաժման աշխատանքներն իրականացվել են ինքնակամ կառույցի քանդման վերաբերյալ որոշման ընդունման օրը՝ առավոտյան՝ ժամը 9:00-ից:

18. Լվովյան փողոցի բնակիչներին վարչական ակտի օրինակը (նույնիսկ ապամոնտաժման աշխատանքների իրականացման ընթացքում քաղաքացիների կողմից նման պահանջ ներկայացվելու պարագայում) չի տրամադրվել, այլ այն հրապարակվել է Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում և քաղաքացիներին հորդորվել է ծանոթանալ քանդման վերաբերյալ որոշումներին պաշտոնական կայքի միջոցով: Միևնույն ժամանակ, քաղաքացիների պնդմամբ՝ վերջիններս Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքի միջոցով ինքնակամ կառույցների քանդման մասին իրենց վերաբերելի որոշումները այդ ընթացքում չեն կարողացել գտնել:

19. Երևանի քաղաքապետարանի կողմից ինքնակամ կառույցների քանդման մասին որոշումներն ընդունվել և ապամոնտաժման աշխատանքներն իրականացվել են Երևան քաղաքի նոր գլխավոր հատակագծի մշակման աշխատանքների ընթացքում, չնայած այն հանգամանքին, որ Երևանի քաղաքապետին ուղղված օրինականացման վերաբերյալ քաղաքացիների դիմումներին ի պատասխան՝ Երևանի քաղաքապետարանից հայտնել են, որ օրինականացման հետ կապված հարցին կանդրադառնան այդ աշխատանքների ավարտից (հողամասերի նպատակային և գործառնական նշանակության հստակեցումից) հետո:

20. Բողոք ներկայացրած անձինք (Ա. Աթաբեկյանը, Ա. Սմբատյանը) 2024 թվականի հուլիս ամսին Պաշտպանի աշխատակազմ տեղեկատվություն են ներկայացրել առ այն, որ Երևանի քաղաքապետարանը ինքնակամ կառույցների ապամոնտաժումից հետո շարունակել է իրականացնել ինքնակամ կառույցների գույքահարկի հաշվարկումը, ըստ որի՝ վերջիններիս 2024 թվականի առաջին կիսամյակի ավարտին վճարման պահանջ է ներկայացվել: Հավելել են, որ 2024 թվականի հուլիս ամսին կատարել են գույքահարկի սահմանված չափով վճարումները:

21. Երևանի քաղաքապետարանի կողմից Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ չի ներկայացվել որևէ փաստական տվյալ, որով կհիմնավորվեր, որ վարչական վարույթի մասնակիցներն *օրենքով սահմանված կարգով* ծանուցվել են վարչական վարույթի հարուցման և դրա արդյունքում ընդունված վարչական ակտերի մասին:

<u>Մարդու իրավունքների պաշտպանի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

22. Սույն որոշման շրջանակում մարդու իրավունքների խախտման առկայությունը գնահատելու և համապատասխան եզրահանգում կատարելու համար Մարդու իրավունքների պաշտպանն անհրաժեշտ է համարում իրավական վերլուծությամբ պատասխանել հետևյալ հարցերին.

1) արդյո՞ք Երևանի քաղաքապետարանի կողմից խախտվել է բողոք ներկայացրած անձանց Սահմանադրությամբ երաշխավորված պատշաճ վարչարարության իրավունքը: Ըստ այդմ, արդյո՞ք Երևանի քաղաքապետարանը վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ծանուցել է վարչական վարույթի հարուցման, վարչական ակտերի ընդունման մասին, ինչպես նաև ապահովվե՞լ է արդյոք վարչական վարույթում մասնակիցների լսված լինելու իրավունքը:

2) արդյո՞ք Երևանի քաղաքապետարանը խախտել է Լվովյան փողոցի վերը նշված հասցեների բնակիչների Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը:

Այսպես, ըստ Սահմանադրության 50-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք ունի վարչական մարմինների կողմից իրենց առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

2. Վարչական վարույթի ընթացքում յուրաքանչյուր ոք ունի իրեն վերաբերող բոլոր փաստաթղթերին ծանոթանալու իրավունք, բացառությամբ օրենքով պահպանվող գաղտնիքների:

3. Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են մինչև անձի համար միջամտող անհատական ակտն ընդունելը լսել նրան, բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի:

«Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» 1996 թվականի միջազգային դաշնագրի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սույն դաշնագրի մասնակից յուրաքանչյուր պետություն պարտավորվում է.

ա. ցանկացած այն անձի համար, որի սույն դաշնագրում ճանաչվող իրավունքներն ու ազատությունները խախտված են, ապահովել իրավական պաշտպանության արդյունավետ միջոց, եթե նույնիսկ այդ խախտումը կատարվել է պաշտոնապես գործող անձի կողմից.

բ. ապահովել, որպեսզի իրավական պաշտպանություն պահանջող ցանկացած անձի համար այդպիսի պաշտպանության իրավունք սահմանվի դատական, վարչական կամ օրենսդրական իրավասու իշխանությունների կամ պետության իրավական համակարգով նախատեսված այլ իրավասու մարմնի կողմից, և զարգացնել դատական պաշտպանության հնարավորությունները.

գ. ապահովել իրավասու մարմինների կողմից իրավական պաշտպանության միջոցների կիրառումը, դրանց նախատեսման պարագայում:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, ում սույն Կոնվենցիայով ամրագրված իրավունքներն ու ազատությունները խախտվում են, ունի պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք, նույնիսկ եթե խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք:

Այս առումով անհրաժեշտ է նաև հիշատակել, որ Եվրոպական դատարանի կողմից ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ Եվրոպական կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետով նախատեսված «գույք» հասկացությունն ունի ինքնավար նշանակություն, որը չի սահմանափակվում նյութական իրերի նկատմամբ սեփականության իրավունքով և կապված չէ ներպետական օրենսդրության ձևական դասակարգման հետ: Նյութական իրերը, գույքային հանդիսացող որոշակի այլ իրավունքներն ու շահերը նույնպես կարող են համարվել «գույքային իրավունքներ» և հետևաբար նաև՝ «գույք» նույն դրույթի իմաստով: Յուրաքանչյուր գործով պարզաբանման ենթակա հարցն այն է, թե արդյոք գործի բոլոր հանգամանքներից ելնելով՝ դիմումատուն ունեցել է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող նյութական շահ[1]:

Միաժամանակ, Եվրոպական դատարանը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «սեփականություն» հասկացությունը բնորոշել է ընդլայնված կերպով՝ օգտագործելով «օրինական սպասելիք» հասկացությունը: Մասնավորապես, Եվրոպական դատարանն արձանագրել է, որ պահանջի իրավունքն ստանում է «սեփականություն»

[1] Տե՛ս, օրինակ, Մինասյանը և Սեմերջյանն ընդդեմ Հայաստանի գործով Եվրոպական դատարանի 23.06.2009 թվականի վճիռը, կետ 55:

որակումն այն պահից, երբ անձն ունենում է «օրինական սպասելիք» իր իրավունքներն իրականացնելու համար[2]:

Ըստ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 20-րդ հոդվածի՝ վարչական վարույթը բաղկացած է միմյանց փոխկապակցված՝ վարույթի հարուցման, ընթացիկ և եզրափակիչ փուլերից:

2. Վարչական վարույթը հարուցվում է անձի (անձանց) դիմումի կամ վարչական մարմնի նախաձեռնության հիման վրա (հարուցման փուլ):

3. Դիմումին կամ վարչական մարմնի նախաձեռնությանը համապատասխան իրականացվում են վարչական գործի քննարկման հետ կապված՝ սույն օրենքով նախատեսված գործառույթները (ընթացիկ փուլ):

4. Վարչական վարույթը եզրափակվում է վարչական ակտի ընդունմամբ (եզրափակիչ փուլ):

5. Անմիջական սպառնացող վտանգը կանխելու կամ արդեն իսկ առաջացած վտանգի հետևանքները վերացնելու, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ դեպքերում վարչական վարույթը կարող է սահմանափակվել միայն եզրափակիչ փուլով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի համաձայն՝ վարչական վարույթի մասնակիցներն են (այսուհետ՝ վարույթի մասնակիցներ)՝ վարչական ակտի հասցեատերը՝ այն անձը, ով դիմել է վարչական ակտ ընդունելու համար, կամ այն անձը, ում նկատմամբ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ ընդունելու է վարչական ակտ.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-ին հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական մարմինն իր նախաձեռնությամբ վարչական վարույթ հարուցելիս վարույթի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին օրենքով սահմանված կարգով ծանուցում է վարչական վարույթ հարուցելու մասին, եթե վարչական վարույթի հարուցումից մինչև վարչական ակտն ընդունելու միջև ընկած ժամանակահատվածը երեք օրից ավելի է:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վարչական վարույթի ընթացքում ծանուցումներն ուղարկվում են փոստային առաքմամբ կամ հանձնվում են առձեռն, իսկ սույն հոդվածով

[2] Տե՛ս, «Պրեսոս Կոմպանիա Նավիեռա Ս.Ա.»-ն և մյուսներն ընդդեմ Բելգիայի թիվ 17849/91 գանգատով Եվրոպական դատարանի 20.11.1995 թվականի վճիռը, կետ 31:

նախատեսված դեպքերում ուղարկվում են էլեկտրոնային փոստի հասցեով կամ հաղորդակցության այլ միջոցներով:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասը սահմանում է՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը վարչական վարույթի ընթացքում պարտավոր է վարույթի մասնակիցներին և նրանց ներկայացուցիչներին հնարավորություն տալ արտահայտվելու վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման հավելվածի 8-րդ կետի համաձայն՝ քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց սեփականության իրավունքով պատկանող հողամասերում (տնամերձ, այգեգործական, ինչպես նաև անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար հողամասեր) գտնվող՝ ինքնակամ կառուցված բնակելի նշանակության (անկախ դրանց ավարտվածության աստիճանից) շենքերը, շինությունները կարող են ճանաչվել օրինական, եթե դրանք բավարարում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և սույն կարգով սահմանված օրինականացման պայմանները:

Նույն որոշման 9-րդ կետը սահմանում է՝ հողամասի սեփականատերն ինքնակամ կառույցի օրինականացման նպատակով, ըստ գույքի գտնվելու վայրի, պետք է դիմի համապատասխան համայնքի ղեկավարին:

ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման հավելվածի 10-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը դիմումն ստանալուց հետո՝ սույն կարգի 8-րդ կետում նշված՝ ինքնակամ կառուցված բնակելի նշանակության կառույցների համար 30-օրյա ժամկետում ընդունում է դրանց օրինականացման կամ մերժման մասին որոշում:

Նշված որոշման 33-րդ կետի համաձայն՝ համայնքի ղեկավարը սեփական

նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին (...):

Վերոնշյալ որոշման 46-րդ կետը սահմանում է՝ ինքնակամ կառույցների օրինականացման մերժման դեպքում դիմողին 5-օրյա ժամկետում գրավոր տեղյակ է պահվում մերժման պատճառների մասին՝ մերժման համար հիմք հանդիսացող իրավական ակտի կոնկրետ նորմի պարտադիր նշումներով, առձեռն հանձնելու կամ փոստով առաքելու միջոցով:

23. ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածը և դրա հիման վրա ընդունված *ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն* որոշումն օրինականացման համար անհրաժեշտ վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում ճանաչում և ամրագրում են ինքնակամ կառույցն իրականացրած անձի՝ ինքնակամ կառուցված շինության նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիքի իրավունքը: **ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ինքնակամ կառույցն իրականացրած անձը տվյալ կառույցի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիքի իրավունք ունի նաև այն դեպքում, երբ տվյալ շինությունը կառուցված է պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի վրա: Ըստ այդմ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրինականացման կարգի 33-րդ կետի դրույթն առ այն, որ «համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնակամ կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին», չի կարող բացառել ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից նշված հողամասերում կառուցված շինության նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիքի իրավունքի իրացման հնարավորությունը:**

ՀՀ վճռաբեկ դատարանը նույն որոշման շրջանակում արձանագրել է նաև, որ բարենպաստ վարչական ակտի ընդունում հայցող անձի դիմումը վերադարձնելու կամ վերահասցեագրելու օրենքով նախատեսված հիմքերի բացակայության դեպքում՝ իրավասու մարմին դիմում ներկայացնելու փաստի ուժով հարուցվում է վարչական վարույթ, և հարուցված վարույթը կարճելու՝ **օրենքով նախատեսված հիմքերի բացակայության դեպքում՝**

վարչական մարմինը կրում է դիմումի ըստ էության քննության պարտականություն՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության արդյունքում պարզելով դիմումով հայցվող բարենպաստ ակտի իրավաչափությունը, հայցվող բարենպաստ վարչական ակտի ընդունումը մերժելու՝ օրենսդրությամբ սահմանված հիմքերի բացակայությունը/ առկայությունը:

Այսպիսով, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, վարույթի հարուցման փուլին հաջորդող փուլում՝ վարչական վարույթի ընթացիկ փուլում, համայնքի ղեկավարը (մարզպետը), հանդիսանալով ինքնակամ կառույցի օրինականացման կամ մերժման մասին որոշում ընդունելու լիազորությամբ օժտված վարչական մարմին, պարտավոր է իրականացնել դիմումի ըստ էության քննություն՝ պարզելով հայցվող բարենպաստ վարչական ակտի իրավաչափությունը, այն է՝ ստուգելով ինքնակամ կառույցի օրինականացումը մերժելու՝ Կարգի 44-րդ կետով սահմանված հիմքերի առկայությունը/բացակայությունը (**ՎԴ/1478/05/19**):

24. Նշվածի համատեքստում ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ **ՎԴ/0016/05/08** գործի շրջանակում կայացրած որոշմամբ անդրադարձել է վարչական վարույթի հարուցման մասին ծանուցման խնդրին: Մասնավորապես, նշել է, որ վարչական վարույթի հարուցման մասին ծանուցելու վարչական մարմնի պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում ապահովելու վարույթին մասնակցող անձի՝ լսված լինելու իրավունքը, ինչը հնարավորություն կտա վերջինիս լիարժեք իրականացնելու իր իրավունքների պաշտպանությունը: Այս եզրահանգումը բխում է ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 1-ին մասի (2015 թվականի խմբ. ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդված) և Կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջներից, որոնցով սահմանված պաշտպանության միջոցները պետք է արդյունավետ լինեն թե՛ գործնական, և թե՛ իրավական առումներով:

25. Վճռաբեկ դատարանն իր կայացրած թիվ **ՎԴ/7107/05/14** նախադեպային որոշմամբ արձանագրել է նաև, որ վարչական վարույթի մասնակիցների՝ ընդունվելիք վարչական ակտի հասցեատիրոջ և երրորդ անձանց, լսված լինելու իրավունքի իրացման միջոցով վերջիններս հնարավորություն են ստանում արդյունավետ կերպով պաշտպանելու և իրականացնելու իրենց այն իրավունքներն ու շահերը, որոնց վերաբերում է տվյալ վարչական վարույթը: Այդ իրավունքի պատշաճ կենսագործման շնորհիվ վարչական վարույթի մասնակիցներն իրազեկվում են իրենց իրավական և փաստական վիճակի վրա ազդող վարչական վարույթի

հարուցման և դրա արդյունքում արձակվելիք վարչական ակտի հիմքում դրվող փաստական և իրավական հանգամանքների վերաբերյալ՝ հնարավորություն ունենալով վարչական գործի քննարկման և լուծման համար էական նշանակություն ունեցող այս կամ այն հարցի կապակցությամբ դիրքորոշումներ, ապացույցներ ներկայացնելու և այլ ընթացակարգային գործողություններ կատարելու միջոցով ազդելու վարչական մարմնի վերջնական որոշման վրա: Իսկ դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ վարչական մարմինը լսի և գնահատի վարույթի մասնակիցների դիրքորոշումները: Վարչական վարույթի ընթացքում վարույթի մասնակիցների ներկայությունն ապահովելու վարչական մարմնի պարտականությունը կարևոր երաշխիք է հանդիսանում վարույթի մասնակցի՝ իրեն ընձեռված իրավունքներն իրացնելու և պաշտպանության միջոցներից օգտվելու համար: **Ընդ որում, այդ իրավունքի իրացմանը խոչընդոտելը, այդ իրավունքի իրացման համար լիարժեք հնարավորություն չապահովելը կամ անհիմն ոչ ողջամիտ սահմանափակումներ ստեղծելն անթույլատրելի է:**

Վերոգրյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ լսված լինելու իրավունքն անձի՝ պատշաճ վարչարարության իրավունքի բաղադրիչ է, որը, մի կողմից, ապահովում է անձի՝ վարչական վարույթի ընթացքում իր իրավունքների պաշտպանությունն արդյունավետ իրացնելու հնարավորությունը, իսկ, մյուս կողմից, ուղղված է վարչական մարմնի կողմից գործի հանգամանքների բազմակողմանի և ամբողջական բացահայտմանը: Օրենսդրի կողմից «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 38-րդ հոդվածով լսված լինելու իրավունքն ամրագրելն ինքնանպատակ չէ, այն իրավական պաշտպանության միջոց է, քանի որ վարչական վարույթի մասնակցին տալիս է հնարավորություն պաշտպանվելու օրենքով չարգելված բոլոր, ի թիվս այլնի, իր կարծիքն արտահայտելու, իր համար բարենպաստ փաստերն ու դրանք հիմնավորող ապացույցներ ներկայացնելու միջոցներով: Ընդ որում, վարչական մարմնի առջև արդյունավետ իրավական պաշտպանության իրավունքը կարող է իրացված համարվել, եթե վարույթի մասնակիցը բավարար ժամանակ է ունեցել վարչական մարմնի առջև իր իրավական պաշտպանությունը կազմակերպելու, նախապատրաստելու համար, ինչպես նաև ունեցել է հնարավորություն՝ արտահայտելու իր դիրքորոշումը վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ:

26. Վճռաբեկ դատարանն իր թիվ **ՎԴ/5539/05/11** նախադեպային որոշմամբ անդրադարձել է վարչական վարույթի շրջանակում անձանց լսված լինելու իրավունքի ապահովման խնդրին: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ***վարչական վարույթի հարուցման մասին ծանուցելու վարչական մարմնի պարտականության սահմանումը նպատակ է հետապնդում ապահովել վարույթին մասնակցող անձի՝ լսված լինելու իրավունքը, ինչը հնարավորություն կտա վերջինիս լիարժեք իրականացնելու իր իրավունքների պաշտպանությունը: Վճռաբեկ դատարանն արձանագրել է նաև, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 36-րդ հոդվածով ամրագրված վարչական վարույթը հնարավորինս սեղմ ժամկետում իրականացնելու պահանջը որևէ կերպ չի կարող խաթարել վարչական վարույթի ընթացքում անձի լսված լինելու իրավունքի պատշաճ իրացումը: Այլ կերպ ասած՝ վարչական վարույթը հնարավորինս սեղմ ժամկետում իրականացնելու օրենսդրական պահանջի կատարումը չի կարող տեղի ունենալ ի վնաս անձի իրավունքների գործնականում պատշաճ իրացման, մասնավորապես՝ վարչական վարույթի ընթացքում անձի լսված լինելու իրավունքի պատշաճ իրացման:***

Մեկ այլ որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը եզրահանգել է, որ *յուրաքանչյուր կոնկրետ դեպքում վարչական մարմնի կողմից կիրառված ծանուցման այս կամ այն միջոցի ընտրությունն արդարացված և հիմնավորված է, եթե վարույթի մասնակցին հնարավորություն է տրվել արդյունավետորեն իրացնել վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ արտահայտվելու իր իրավունքը: Իսկ նման հնարավորությունն իրական է, եթե վարույթի մասնակիցը փաստացիորեն իրազեկված է լսումների օրվա, ժամի ու վայրի մասին այնպես, որ իր տրամադրության տակ ունի բավարար ժամանակ իր պաշտպանությունը կազմակերպելու համար (տե՛ս, անհատ ձեռնարկատեր Լարիսա Բաղայանի ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի թիվ ՎԴ/1889/05/18 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.02.2023 թվականի որոշումը):*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն Իվանովը և այլոք ընդդեմ Բուլղարիայի 2006 թվականի նոյեմբերի 24-ի գործով կայացրած վճռով անդրադարձել է Կոնվենցիայի 13-րդ հոդվածով երաշխավորված պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքին՝ նշելով, որ սահմանված պաշտպանության միջոցները պետք է արդյունավետ լինեն թե՛ գործնական, և թե՛ իրավական առումներով, մասնավորապես՝

այն առումով, որ պաշտպանության միջոցներից օգտվելը չպետք է անհիմն խոչընդոտվի պետական մարմինների գործողություններով կամ անգործությամբ[3]:

Իր հերթին ՀՀ Սահմանադրական դատարանը 2020 թվականի մայիսի 12-ի թիվ ՍԴՈ-1529 որոշմամբ արձանագրել է որ.

1) անձի լսված լինելու իրավունքը մարդու և քաղաքացու հիմնական իրավունքի՝ պատշաճ վարչարարության իրավունքի բաղկացուցիչ տարր է,

2) լսված լինելը վարչական մարմինների կողմից գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության ընթացքում մարդու և քաղաքացու իրավական պաշտպանության միջոց է, որը հնարավորություն է ընձեռում, որ յուրաքանչյուր ոք առարկություն ներկայացնի կամ այլ կերպ իր կարծիքն արտահայտի իր նկատմամբ կայացվելիք և իր իրավունքներին կամ ազատություններին միջամտող ցանկացած վարչական ակտի առնչությամբ,

3) անձի լսված լինելը պատշաճ վարչարարության հիմնարար բաղադրիչ է,

4) անձի լսված լինելու իրավունքի իրականացումն ունի հետևյալ գործառութային նշանակությունը. մի կողմից՝ անձի համար երաշխավորվում է վարչական մարմնի միջամտող անհատական ակտի դեմ արդյունավետ պաշտպանության ապահովման հնարավորությունը, իսկ մյուս կողմից՝ վարչական մարմինը վարչական վարույթի շրջանակներում պարտավոր է քննարկել գործի փաստական հանգամանքներն ամբողջությամբ և պարզել դրանց օբյեկտիվությունը և լիարժեքությունը՝ վարույթի մասնակիցների ներկայացրած փաստարկներն ու դիրքորոշումները քննարկման առարկա դարձնելու միջոցով,

5) անձն օժտված է վարչական վարույթում լսված լինելու իրավունքով այն դեպքերում, երբ նրա նկատմամբ պետք է ընդունվի միջամտող անհատական ակտ,

6) վարչական վարույթում լսված լինելու իրավունքով օժտված է վարչական ակտի հասցեատեր և վարչական վարույթի մասնակից չհանդիսացող յուրաքանչյուր անձ, եթե տվյալ վարույթի արդյունքում ընդունվելիք միջամտող անհատական ակտը կարող է անմիջական ազդեցություն ունենալ վերջինիս իրավունքների և օրինական շահերի վրա,

7) լսված լինելու իրավունքը սահմանադրորեն երաշխավորվում է միայն այն վարչական ընթացակարգերում, որոնք ուղղված են անձանց նկատմամբ միջամտող անհատական ակտ

[3] Տե՛ս Իվանովը և այլոք ընդդեմ Բուլղարիայի 2005 թվականի գործը:

ընդունելուն,

8) «(...) բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի» դրույթի բովանդակությունից հետևում է, որ վարչական մարմնի կողմից լսումներ կարող են չանցկացվել օրենքով **սահմանված բացառիկ դեպքերում** (...)»:

27. Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո անդրադառնալով քաղաքացիների պատշաճ վարչարարության իրավունքի առերևույթ խախտմանն առնչվող հարցադրմանը՝ հարկ է նշել, որ Երևանի քաղաքապետարանի նախաձեռնությամբ հարուցվել է վարչական վարույթ: Միևնույն ժամանակ, Պաշտպանի աշխատակազմ չի ստացվել որևէ տեղեկատվություն, որով կհիմնավորվեր, որ քաղաքացիներն օրենքով սահմանված կարգով ծանուցվել են վարչական վարույթի հարուցման մասին:

28. **Հարուցված վարչական վարույթի շրջանակում չի ապահովվել բողոք ներկայացրած անձանց «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական վարույթում քննարկվող փաստական հանգամանքների վերաբերյալ արտահայտվելու իրավունքը՝ նույն հոդվածի 3-րդ մասի «ա» կետով սահմանված հիմքով:** Ըստ այդմ, լսումներ չեն անցկացվում, եթե անհրաժեշտություն է առաջանում անհապաղ ընդունելու վարչական ակտ, քանի որ **հապաղումը կարող է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացման**:

Վարչական մարմինը որոշման շրջանակում, ի թիվս այլնի, վարչական ակտի ընդունման հապաղումը պայմանավորել է **հանրության համար որևէ վտանգի առաջացմամբ**[4]**:** Մինչդեռ, Երևանի քաղաքապետի որոշումներում առկա չեն բավարար հիմնավորումներ այն մասին, թե վերոնշյալ հանգամանքներով պայմանավորված վարչական ակտն ընդունելու հապաղումն ինչպե՞ս պետք է հանգեցներ հանրության համար որևէ վտանգի առաջացման: Քննարկվող բողոքների ուսումնասիրության շրջանակներում նման հիմնավորումներ չեն ներկայացվել նաև Մարդու իրավունքների պաշտպանին:

Երևանի քաղաքապետարանը վարչական վարույթի շրջանակում լսումներ չանցկացնելը հիմնավորել է Լվովյան փողոցի նշված հասցեներում առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի առկայության ընթացող շինարարական աշխատանքներով[5]: Մինչդեռ, Երևանի քաղաքապետարանի կողմից ինքնակամ կառույցների

[4] Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:
[5] Տե՛ս սույն որոշման 11-րդ կետը:

քանդման վերաբերյալ որոշումների կայացման ժամանակ այդ հասցեներում շինարարական աշխատանքներն ավարտված են եղել, իսկ որոշ դեպքերում ինքնակամ կառույցներն օրենքով սահմանված կարգով հաշվառված են եղել Կադաստրի կոմիտեում:

Ավելին, բողոք ներկայացրած անձանց ներկայացրած փաստաթղթերի բովանդակային ուսումնասիրությունից պարզվում է, որ վերջիններս ինքնակամ կառույցների օրինականացման խնդրանքով տարիներ շարունակ[6] դիմել են Երևանի քաղաքապետարան, սակայն օրինականացման կամ օրինականացումը մերժելու վերաբերյալ որոշում չի կայացվել և նրանց տրամադրվել են միջանկյալ բնույթ կրող, սակայն հարցն ըստ էության չլուծող պատասխաններ:

Երևանի քաղաքապետարանի կողմից Լվովյան փողոցի ինքնակամ կառույցների քանդման վերաբերյալ որոշումները կայացվել են 2024 թվականի փետրվարի 29-ին և նույն օրը՝ առավոտյան ժամը 9:00-ից սկսած ընթացել են ապամոնտաժման աշխատանքներ: Վարչական ակտի հասցեատերերին այդ ակտերի օրինակները, նույնիսկ ապամոնտաժման աշխատանքների իրականացման ընթացքում և վերջիններիս կողմից Երևանի քաղաքապետարանի աշխատակիցներին նման պահանջ ներկայացվելու պարագայում, չեն տրամադրվել: Նման պարագայում վարչական մարմինը պատշաճ չի կատարել օրենսդրությամբ և հարցին առնչվող ներպետական ու միջազգային չափանիշներով իր վրա դրված ծանուցման պարտականությունը: Օրինակ՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտը, ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին: Դա կարող է իրականացվել պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ, հասցեատիրոջը ստորագրությամբ առձեռն հանձնելու, ինչպես նաև հանձնման այնպիսի եղանակներով, որոնք թույլ են տալիս հաստատել հասցեատիրոջ կողմից ակտը ստանալու կամ օրենքով սահմանված դեպքերում պատշաճ ծանուցված լինելու փաստը (…): Ավելին, *ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման հավելվածի 46-րդ կետի համաձայն՝ ինքնակամ կառույցների օրինականացման մերժման*

[6] Այսպես, օրինակ՝ դիմումատուներից մեկի՝ Ա. Սմբատյանի կողմից ինքնակամ կառույցի օրինականացման վերաբերյալ առաջին դիմումը Երևանի քաղաքապետարան է մուտքագրվել 2021 թվականի դեկտեմբերի 21-ին, իսկ վերջինը՝ 2024 թվականի հունվարի 15-ին:

դեպքում դիմողին 5-օրյա ժամկետում գրավոր տեղյակ է պահվում մերժման պատճառների մասին՝ մերժման համար հիմք հանդիսացող իրավական ակտի կոնկրետ նորմի պարտադիր նշումներով, առձեռն հանձնելու կամ փոստով առաքելու միջոցով:

29. Վերոգրյալի լույսի ներքո՝ Մարդու իրավունքների պաշտպանն արձանագրում է, որ վարչական վարույթի ընթացքում անձի լսված լինելու իրավունքը դիտարկվում է որպես մարդու և քաղաքացու հիմնական իրավունքի՝ պատշաճ վարչարարության իրավունքի բաղկացուցիչ տարր և ուղղակիորեն պայմանավորում վարչական վարույթի փաստական հանգամանքների լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննարկումն ու լուծումը:

Վարչական վարույթի շրջանակում վարչական մարմնի կողմից լսումներ կարող են չանցկացվել միայն օրենքով սահմանված **բացառիկ դեպքերում:** Երևանի քաղաքապետարանի վկայակոչած այն փաստական հանգամանքները, ըստ որոնց՝ առանց համապատասխան քաղաքաշինական փաստաթղթերի *(տե՛ս սույն որոշման 11-րդ կետը)* իրականացված վերոնշյալ հասցեների շինությունների առկայության պարագայում վարչական ակտն ընդունելու հապաղումը կարող էր հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացման, պատշաճ հիմնավորված չէ և չի կարող դիտարկվել՝ որպես **լսումներ չանցկացնելու բացառիկ դեպք:**

Վարչական մարմինը օրենքով սահմանված կարգով չի ծանուցել բողոք ներկայացրած անձանց, չի ապահովել քաղաքացիների լսված լինելու իրավունքը՝ զրկելով նրանց իրենց իրավունքները պաշտպանելու արդյունավետ կառուցակարգերից օգտվելու հնարավորությունից: **Հետևաբար, լսված լինելու իրավունքի չապահովմամբ վարչական մարմինը վարչական վարույթի շրջանակում չի երաշխավորել նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված բոլոր, այդ թվում՝ գործի մասնակիցների օգտին առկա բացահայտման ենթակա հանգամանքները պարզելու երաշխիքը:**

30. Վարչական մարմնի կողմից՝ որպես վարչական ակտի ծանուցման ձև ընտրվել է վարչական ակտի հրապարակման եղանակով ծանուցումը, ինչը չի համապատասխանում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 59-րդ հոդվածի պահանջներին: Մասնավորապես, բողոք ներկայացրած անձինք նույն օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիտարկվում են որպես վարչական վարույթի մասնակիցներ և

հասցեատերեր, որպիսի պարագայում նույն օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով՝ գրավոր վարչական ակտը պետք է հանձնվեր վարույթի մասնակիցներին:

31. **Անդրադառնալով Լվովյան փողոցի տարբեր հասցեների բնակիչների՝ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրացման հետ կապված հարցին՝ հարկ է նկատի ունենալ հետևյալը.**

32. Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Ըստ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 8-րդ հոդվածի՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի Սահմանադրությամբ կամ օրենքով իրեն տրված հիմնական իրավունքները ոտնահարելու դեպքում իրավասու ազգային դատարանների միջոցով արդյունավետ վերականգնելու այդ իրավունքները:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝

ա. խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար,

բ. չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով.

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ սույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ (…):

Նույն օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական բողոքը կարող է բերվել վարչական ակտն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում (…):

Սահմանադրական դատարանն իր 2014 թվականի ապրիլի 8-ի թիվ ՍԴՈ-1148 որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի հետևողականորեն ձևավորված նախադեպային իրավունքի համաձայն՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 1-ին արձանագրության 1-ին հոդվածի շրջանակներում պաշտպանության է ենթակա նաև օրինական ակնկալիքի իրավունքը՝ ներառվելով նշված արձանագրության մեջ «գույք» հասկացության բովանդակային ծավալում[7]:

Եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներով սահմանել է, որ Կոնվենցիայի 13-րդ հոդվածով երաշխավորվում է Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների պարտադիր կիրառումն ապահովող իրավական պաշտպանության միջոցների առկայությունը ներպետական մակարդակով: Դիմումատուի բողոքի բնույթից կախված՝ 13-րդ հոդվածի ներքո Պայմանավորվող պետությունների պարտավորությունների շրջանակը տարբեր է: Սակայն 13-րդ հոդվածով պահանջվող իրավական պաշտպանությունը պետք է լինի «արդյունավետ» ինչպես գործնականում, այնպես էլ օրենքի տեսանկյունից[8]:

Մեկ այլ վճռով Եվրոպական դատարանն արձանագրել է, որ արդյունավետ լինելու համար 13-րդ հոդվածով պահանջվող իրավական պաշտպանության միջոցը պետք է լինի հասանելի գործնականում և նախատեսված օրենսդրությամբ, մասնավորապես այն իմաստով, որ վերջինիս իրականացումն անարդարացիորեն չխոչընդոտվի պատասխանող պետության իշխանությունների գործողություններով կամ անգործությամբ[9]:

ՀՀ սահմանադրական դատարանը 2016 թվականի փետրվարի 9-ին թիվ ՍԴՈ-1254 որոշմամբ անդրադարձել է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2004 թվականի դեկտեմբերի 15-ի՝ «Վարչական ակտերի դատական վերանայման վերաբերյալ» թիվ(2004)20

---

[7] *Տե՛ս Կապեցկին ընդդեմ Սլովակիայի 2004 թվականի գործը:*

[8] Տե՛ս M.S.S.-ն ընդդեմ Բելգիայի և Հունաստանի, դիմ. թիվ 30696/09, 2011թ. հունվարի 21-ի վճիռը, պարբերություն 288:

[9] Տես՝ «*Çakici* ընդդեմ Թուրքիայի» [ՄՊ], գանգատ թիվ 23657/94, § 112, ՄԻԵԴ 1999-IV:

հանձնարարականին, որով սահմանվում են վարչական ակտերի նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողության առանձին իրավական չափորոշիչներ: Մասնավորապես, խոսքը վերաբերում է՝ ա) վարչական ակտի բողոքարկման համար ողջամիտ ժամկետի տրամադրմանը (կետ 46), բ) վարչական ակտի օրինականության վիճարկման համար ողջամիտ ժամկետի սահմանմանը (կետ 47), գ) վարչական ակտի մասին անձին ծանուցելու պահի՝ որպես բողոքարկման ժամկետի հաշվարկման մեկնարկին (կետ 48):

Այսպես, հիշատակված հանձնարարականի 48-րդ կետի պահանջներին համապատասխան՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն առաջարկում է մասնակից պետություններին հաշվի առնել այն, որ **վարչական ակտի բողոքարկման ժամկետի** ընթացքի սկիզբն ուղղակիորեն չպետք է կապել այն պահի հետ, երբ ֆիզիկական կամ իրավաբանական անձն իմացել է կամ պետք է իմանար համապատասխան ակտի մասին, ***ակնհայտ է համարում, որ այդ ժամկետի հաշվարկն սկսվում է այդ ակտի մասին անձին ծանուցելու պահից,*** և, այդ հանգամանքով պայմանավորված, մասնակից պետություններին առաջարկում է նաև համապատասխան ակտի մասին անձին ծանուցելու պահը սահմանել ***որպես բողոքարկման ժամկետի հաշվարկի սկիզբ***:

ՀՀ վճռաբեկ դատարանը 2013 թվականի մայիսի 24-ի թիվ ՎԴ/1346/05/10 որոշմամբ անդրադառնալով վիճարկվող վարչական ակտի՝ գործում բացակայության պայմաններում դրա իրավաչափության ստուգման իրավական հարցադրմանը արձանագրել է, որ հայցի առարկայի բաղկացուցիչ մասն է կազմում, կամ, որ նույնն է, հայցի առարկայի նյութական հիմքն է հայցի նյութական օբյեկտը: Վիճարկման հայցի դեպքում հայցի նյութական օբյեկտը վիճարկվող վարչական ակտն է: ***Վերջինս վարչական դատավարությունում հանդիսանում է դատական քննության հիմնական օբյեկտը: Հետևաբար, առանց վիճարկվող ակտի հետազոտման ոչ միայն անհնարին է ապահովել գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության պահանջի կատարումը, այլև հայցի նյութական օբյեկտի՝ վիճարկվող վարչական ակտի բացակայությունն ընդհանրապես բացառում է այդ ակտի իրավաչափությունը գործում առկա ապացույցների միջոցով գնահատելու հնարավորությունը:***

Երևանի քաղաքապետարանի կողմից ընդունված ինքնակամ կառույցների քանդման վերաբերյալ որոշումների եզրափակիչ մասի 6-րդ կետով սահմանվել է, որ որոշումներն ուժի

մեջ են մտնում ընդունման պահից, իսկ 7-րդ կետով սահմանվել է, որ այդ որոշումը կարող է բողոքարկվել ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

Ինչպես արդեն նշվել է, ինքնակամ կառույցների քանդման վերաբերյալ որոշումներն ընդունվել և ապամոնտաժման աշխատանքները կատարվել են 2024 թվականի փետրվարի 29-ին՝ առավոտյան ժամը 9:00-ից սկսած:

Այս առումով Մարդու իրավունքների պաշտպանն ընդգծում է, որ վարչական ակտը հրապարակվելու պահից որոշակի ժամկետում բողոքարկելու վերաբերյալ կարգավորում նախատեսելիս Երևանի քաղաքապետարանը պարտավոր էր՝ ելնելով անձանց արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից, անհրաժեշտ նախադրյալներ ստեղծել նշված իրավունքի իրացումը գործնականում երաշխավորելու համար: Այդ առումով առանցքային է, որ վարչական ակտը բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը կախված է այն հանգամանքից, թե որքանով է **բողոքարկվող վարչական ակտը հասու շահագրգիռ անձին, ողջամիտ ի՞նչ ժամկետում նա կարող է հիմնավոր բողոք ներկայացնել իր իրավունքների դատական պաշտպանության համար և այլն:**

Վարչական բողոք ներկայացնելու համար նախապատրաստվելու նպատակով անհրաժեշտ է, որպեսզի անձն իր տնօրինության ներքո ունենա բողոքարկվող վարչական ակտը, որպեսզի կարողանա նշված ակտի ուսումնասիրության հիման վրա իր բողոքում հիմնավորել, պատճառաբանել վարչական մարմնի կողմից իր իրավունքների ենթադրյալ խախտումը և վարչական վարույթի ելքի վրա դրանց ազդեցությունը:

Վերոգրյալի լույսի ներքո՝ կարևոր է նկատի ունենալ, որ վարչական ակտի բողոքարկման ժամկետ սահմանելիս այդ ժամկետի հաշվարկման սկիզբն անհրաժեշտ է պայմանավորել վարչական ակտը դրա հասցեատերերի կողմից ստանալու պահով: Մասնավորապես, այս առումով օրենսդրի կամքն է երաշխավորել բողոքարկվող վարչական ակտը շահագրգիռ անձին հասու դարձնելը, դրան պատշաճ ծանոթանալը և բողոքարկման համար բավարար ժամանակ ունենալը: Այսինքն, դատական պաշտպանության իրավունքի իրացման համար կարևոր է ոչ միայն ծանուցման միջոցով ակտը անձին հասու դարձնելը, այլև ակտի բողոքարկման համար գործնականում ողջամիտ ժամկետ տրամադրելը, որպիսի չափանիշները պահպանված չեն եղել սույն գործի շրջանակներում: ՀՀ վճռաբեկ և Սահմանադրական դատարանների իրավական դիրքորոշումների վերլուծությունը վկայում է,

որ անձի դատական պաշտպանության իրավունքի երաշխավորման համար թե օրենսդրական, թե գործնական առումով պետք է ապահովված լինի վերոնշյալ երեք պայմանների միաժամանակյա առկայությունը: Մասնավորապես.

- վարչական ակտի օրինականության վիճարկման համար պետք է ողջամիտ ժամկետ սահմանվի,
- վարչական ակտի մասին անձին օրենքով սահմանված կարգով ծանուցելու պահը պետք է սահմանվի որպես վարչական ակտի բողոքարկման համար օրենքով նախատեսված ժամկետի հաշվարկման մեկնարկ,
- վարչական ակտի հասցեատերերին պետք է տրամադրվի ողջամիտ ժամկետ վարչական ակտի բողոքարկման համար նախապատրաստվելու նպատակով:

Ներկայացված փաստական հանգամանքների, գործող իրավակարգավորումների և դատարանների իրավական դիրքորոշումների համադրման արդյունքում Մարդու իրավունքների պաշտպանը եզրահանգում է, որ սույն գործի շրջանակներում տեղի է ունեցել քաղաքացիների պատշաճ վարչարարության իրավունքի խախտում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Մարդու իրավունքների պաշտպանը եզրահանգում է նաև, որ խախտվել է քաղաքացիների՝ Սահմանադրությամբ երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը: Քաղաքացիներն օրենքով սահմանված կարգով չեն ծանուցվել կայացված վարչական ակտերի մասին, վերջիններս սահմանված կարգով հասու չեն դարձվել քաղաքացիներին, և անձանց չի տրամադրվել ողջամիտ ժամկետ մինչև ինքնակամ կառույցների քանդման աշխատանքների իրականացումը արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը իրացնելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և նույն հոդվածի 2-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Հաստատված համարել, որ տեղի է ունեցել Ա. Աթաբեկյանի, Հ. Գևորգյանի, Ա. Ադամյանի, Ա. Սմբատյանի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ

երաշխավորված պատշաճ վարչարարության և արդյունավետ դատական պաշտպանության իրավունքների խախտում:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետարանին՝

2.1. ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ինքնակամ կառուցված շինությունների ապամոնտաժման հետևանքով քաղաքացիների խախտված իրավունքների վերականգնման ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում՝ մշակելով ու իրացնելով անհրաժեշտ կառուցակարգեր.

2.2. ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հետագայում իրավունքի նման խախտումները բացառելու ուղղությամբ:

3. Որոշումն ուղարկել Երևանի քաղաքապետին և բողոք ներկայացրած անձանց:

Ա. ՄԱՆԱՍՅԱՆ